# 2021-22թ ուստարվա աշխատանքային պլան

## Ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ

Էվելինա Ռոբերտի Գալստյան

# 2021-2022 ուստարվա աշխատանքները COVID 19-ի պայմաններում

**Նպատակը**- 1. Պահպանելով պարետատան և ԿԳՄՍՆ-ի կողմից ներկայացված ուղեցույցի ցուցումները՝ ապահովել առողջ ու անվտանգ աշխատանքանին և կրթական միջավայր

2. Աշխատել այն գիտակցմամբ, որ մեր պարտականությունն է յուրաքանչյուր սովորողի լավագույն կրթությամբ ապահովելը, նույնիսկ համաճարակային իրավիճակում:

3. Կարգապահական կանոնների խիստ պահպանում շեշտը դնելով սոցիալական հեռավորություն պահպանելու պահանջին և դիմակներ կրելուն:

## Ամենօրյա աշխատանքներ

1. Ուսուցիչների հաճախումների հաշվառում, բաց թողնված և փոխարինած ժամերի գրանցում մատյանում:

2. Օրվա պլանների ստուգում

3. Դասացուցակի վերահսկողություն, դասաժամերի սահուն ընթացքի ապահովում

4. Բացառել դասի ժամին սովորողների դրսում գտնվելը և դասերից ուշանալ:

5. Հիմնավորել աշակերտների դասերից բացակայելու թույլտվության փաստը՝ ծնողների հետ համագործակցելով:

## Ամենամսյա աշխատանքներ

1. Մասնակցել մեթոդմիավորման աշխատանքներին: Հանդես գալ առաջարկություններով և վերլուծություններով:

2. Կատարել դասալսումներ:

3. Հետևել համակարգչային սենյակում անցկացվող դասերի ընթացքին:

4. Մասնակցել ծնողական ժողովներին և դասղեկական ժամերին:

5. Կատարել թեմատիկ գրավորների, գործնական աշխատանքների և բաց դասերի վերլուծություն

6. Emis-ում ստուգել սովորողների հաճախումները և գնահատականները:

7. Հիմք դնել առարկայական դրվածքի ուսումնասիրմանը:

8. Հետևել դասարաններում ձևավորված սովորողների առաջադիմության գնահատման սանդղակին,կատարել գնահատում:

9. Խրախուսման ներկայացնել առաջավոր աշակերտներին և ուսուցիչներին:

10. Կատարողականի ստուգում

11.Կատարել ուսուցիչների բաց թողած և փոխարինած ժամերի մատյանի լրացում:

## 2020-2021 ուստարվա աշխատանքների ընդհանուր վերլուծություն

2020թ.-ին տարածված համավարակի հետ կապված դասապրոցեսը առաջին կիսամյակում կազմակերպվել է հեռավար, իսկ 2-րդ կիսամյակում առկա ուսուցմամբ: Ուսուցչներն իրենց թեմատիկ պլանները սկզբից կազմել են ըստ խմբերի, քանի որ ուսուցումը կազմակերպված էր օրումեջ՝ ըստ խմբերի, հետո լրիվ դասարանի համար ամենօրյա ուսուցման համապատասխան: Շատ ծանր է եղել ուսումնական պրոցեսը առաջին կիսամյակում: Համավարակն ու պատերազմը իրենց ծանր ազդեցությունն ունեցան բոլորի՝ և՛ ուսուցիչների, և՛ աշակերտների վրա: Մեծ ջանքերի շնորհիվ հաղթահարելով այդ ամենը , բոլոր աշխատակիցները՝ թե՛ մանկավարժական, թե՛ ուսումնաօժանդակ կազմը խստագույնս պահպանելով համավարակ կանոններին ու ցուցումները, բարեխղճորեն կատարել են իրենց առջև դրված խնդիրները, ուսումնադաստիարակչական աշխատանքները: Ուսուցիչները կատարել են ուսպլանով հաստատված իրենց աշխատանքերը: Առաջին կիսամյակում եղած բացթողումներն ու թերություններն ամբողջությամբ լրացվել են 2-րդ կիսամյակում՝ այդ թվում գործնական աշխատաները, բաց դասերն ու միջոցառումները, դասալսումները: Առաջին կիսամյակում ուսուցումն ըստ խմբերի կատարված աշխատանքի արդյունքում ուսուցիչները չէին հասցրել ավելի լավ ճանաչել սովորողներին և նրանց հնարավորությունները, ինչը խանգարում էր ռեալ գնահատում կատարել: Սովորողների մոտ նկատվում էր շփման պահանջ, կոլեկտիվի ձևավորում: Ապահովվել է ուսումնական պլանով սահմանված ծրագրի կատարողականը: Պատշաճ ձևով կազմակերպվել և անցկացվել են առարկայական օլիմպիադաները, ունեցել ենք հանրապետական փուլի 6 հաղթողներ՝ 5-ը ՆԶՊ առարկայից՝ 2-րդ տեղ և մեկը հայոց պատմությունից՝ 2-րդ տեղ: 2-րդ կիսամյակում կատարվել նե նախատեսված բոլոր բաց դասերն ու միջոցառումները, ժամանակին հրավիրվել են մեթոդմիավորման նիստեր, որտեղ լսվել են հետաքրքիր զեկուցումներ և կատարվել է աշխատանքների վերլուծություն: Ուսուցիչների համար հնարավորթյուններ և պայմաններ են ստեղծվել մասնակցելու վերապատրաստումներին, սեմինարներին, վեբինարներին, ինքնակրթությամբ զբաղվելու համար տրամադրվել համապատասխան գրականություն: Պատշաճ կերպով կազմերվել և անցկացվել է 10-11 դասարանների սովորողների փոխադրական քննությունները ՀԼԳ, Մաթեմատիկա, Հայոց պատմ., Ֆիզիկա առարկաներից: Անբավարար գնահատված սովորողներին տրվել են ամառային առաջադրանքներ, իսկ Օգոստոսի 20-30-ը կազմակերպվել և անցկացվել է այդ սովորողների առաջադրանքների գիտելիքների ստուգում՝ նախապես կազմված ժամանակացույցով և հանձնաժողովով: Սովորողները ներկայացել են ժամանակին և պատրաստված: Ստուգումը կատարվել է թեստային աշխատանքով, իսկ հայոց լեզվից տրվել է թելադրություն: Սովորողները գնահատվել են դրական 8-20 միավոր և փոխադրվել են հաջորդ դասարան: Կից ներկայացնում եմ փոխադրական քննությունը վերահանձնողների արդյունքները:

Համավարակի պայմաններում խստագույնս պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կազմերպվել և անցկացվել են 12-րդ դասարանի ավարտական քննությունները, սովորողները գնահատվել են դրական՝ 8-20 միավոր և ավարտել են դպրոցը: Ավարտած 45 աշակերտներից 36-ն ընդունվել են ԲՈՒՀ, որոնցից 7-ը անվճար;

Ուստարվա 2-րդ կիսամյակը շատ ավելի հագեցած էր ուսումնադաստիարակչական աշխատանքներով: Պարբերաբար ստուգվել է էլեկտրոնային մատյաններում թեմատիկ գրավորների և բանավոր գնահատականների քանակը, ինչը համապատասխանել է ուսպլանով նախատեսվածին: Իրականացվել է տնօրենի կողմից ավանդական դարձած անվճար էքսկուրսիաներն ու այցելությունները պատկերասրահ, Դիլիջանի Կենտրոնական Բանկ, որում ընդգրկվել էին մեծ թվով սովորողներ, ինչը և մեծ ոգևորություն է առաջացրել նրանց մոտ:

Չենք մասնակցել Կենգուրու և Մեդվեժոնոկ մրցույթին:

Չի կատարվել նախատեսված քանակով փոխադարձ դասալսումներ

Չի կատարվել առաջավոր փորձի փոխանակում

Պակաս է եղել մեթոդմիավորման նիստերի քանակը:

Աշխատանքներն ըստ ամիսների 2021-22թթ.

Օգոստոսի 6-31

1. Նախորդ տարվա աշխատանքների վերլուծություն:
2. Կազմել ամառային առաջադրանքների ստուգման ժամանակացույց և հանձնաժողով:Կատարել ստուգում
3. Ծանոթանալ և քննարկել ուսուցիչների կողմից առաջարկվող թեմատիկ պլանների տարբերակները և մշակել օրինակելի տարբերակը:
4. Ուսուցիչների հետ մշակել նաև օրվա պլանի օրինակելի տարբերակ և հաստատել:
5. Ծանոթանալ դասաքրքերի ընտրությանը,որ դասարանն ինչ դասագրքով է անցնելու:
6. Հրավիրել արտահերթ մ/մ նիսեր քննարկել և տնօրենին ներկայացնել ժամաբաշխումը և այլ հարցեր:
7. Ծանոթանալ նոր ձևավորված հոսքային դասարանների սովորողների հետ:
8. Տեղեկացնել և տեղեկանալ կամավոր ատեստավորվող ուսուցիչների հետ նրանց հետ կիսվել ունեցած տեղեկատվությամբ:
9. Կազմել դասացուցակ և ներկայացնել հաստատման:

Կից ներկայացնում եմ օգոստոս ամսվա փոխադրական քննության արդյունքները,թեմատիկ և օրվա պլանների նմուշները,կամավոր և հերթական ատեստավորվող ուսուցիչների ցանկը և ուսպլանը:

Սեպտեմբերի 1-30

1.Տնօրենին հաստատման ներկայացնել դասացուցակը մինչև **1-09**:

2. Տնօրենի հետ ստուգել և հաստատել թեմատիկ պլանները մինչև **5-09**:

3.Emis-ում կատարել ժամաբաշխումը և գրանցել դասացուցակը մինչև**5.09**:

4.Ստուգիչ գրավոր աշխատանքներ 10-րդ դասարաններում հ.լ, մաթեմատիկա,անգլ.,ռ.լ, հ.պատմ.առարկաներից,իսկ մյուս դասարաններում ըստ խորացված առարկաների հ.լ, հ.պ., անգլ.,մաթեմ.մինչև **10.09**:

5.Ուսուցիչների հետ համաձայնեցված կազմել դասերից հետո սովորողների հետ լրացուցիչ անվճար պարապմունքներ անցկացնելու գրաֆիկ մինև**15.09**:

6.Կազմել բաց դասերի, լաբորատոր աշխատանքների, գործնական աշխատանքների, միջոցառումների ժամանակացույց: մինչը **15.09**

7. Կազմել փոխադարձ դասալսումների ժամանակացույց, մինչև **15.09**

8. Դասարաններում ստեղծել աշակերտների գնահատման սանդղակ, **20.09-30.09**:

9. Emis-ում ստուգել աշակերտների հաճախումները և գնահատականները, մինչև **30.09**

10. Քննարկել տարվա լավագույն ուսուցչի մասնակցության հարցը, մինչև **15.09**:

11. Կազմել առարկայական տասնօրյակների գրաֆիկ:մինչև **20.09**

12. Կազմել մ/մ նիստերի օրերի գրաֆիկ:մինչև **20.09**

Կից ներկայացնում եմ ստուգիչ գրավոր աշխատանքների արդյունքները և միջին գնահատականները, աշակերտների հետ ուսուցիչների լրացուցիչ պարապմունքներ անցկացնելու գրաֆիկը, բաց դասերի, միջոցառումների, լաբորատոր աշխատաների, փոխադարձ դասալսումների, առարկայական տասնօրյակների ժամանակացույցը, մ/մ- ան նիստերի օրերի գրաֆիկը:

Հոկտեմբերի 1-31

1. Կազմեկրպված ձևով անցկացնել ուսուցչի տոնին նվիրված ինքնակառավարման օրը` ,,Դասը վարում են աշակերտները>> խորագրով: (Ուսուցչի օրը)

2. Կատարել դասալսումներ:

3. Մասնակցել մեթոդմիավորման նիստերին, քննարկել ստուգիչ գրավոր աշխատանքերի արդյունքները, ծանոթանալ կազմակերպվող աշխատանքերին:

4. Ապահովել «Մեղու», «Մեդվեժոնոկ» մրցույթին աշակերտների մասնակցությունը:

5. Աշնանային արձակուրդների ընթացքում ապահովել աշակերտների զբաղվածությունը դպրոցում:

Նոյեմբեր 5-30

1. Կազմակերպել և անցկացնել առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլը՝ 20.11-30.11

ա) ներկայացնել մասնակիցների ցուցակը

բ) Կազմել ժամանակացույցը և հանձնաժողովի կազմը

գ) Մեթոդմիավորման նիստին քննարկել թեսթերի նմուշները և ներկայացնել:

2. Դասալսումներ

3. Մասնակցություն մեթոդմիավորման նիստերին, կատարել բաց դասերի, միջոցառումների վերլուծություն:

4. Քննարկել այլընտրանքային ուսուցման մեթոդներ:

Դեկտեմբեր 3-25

1. Կատարել առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլի վերլուծություն, ճշտել տարածքային փուլի մասնակիցների ցուցակը: մինչև 15.12

2. Մեթոդմիավորման նախագահների հետ կազմել կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքի, թեստերի նմուշները, մեկ անգամ ևս ուսուցիչներին տեղեկացնել դրանց տրման կարգի, գնահատման մասին: մինչև 20.12

3. Կազմակերպել և անցկացնել 12-րդ դասարանների պետական ավարտական քննությունները՝ աշակերտների կողմից ընտրված առարկաներից: մինչև 25.12

ա) Կազմել ժամանակացույց և հանձնաժողեցի կազմ:

բ) Նշանակել խորհրդատվության օրեր:

4. Ստուգել համակարգչային սենյակում անցկացվող դասերի ընթացքը

5. Ստուգել կատարողականը:

6. Emis-ում ստուգել սովորողների հաճախումները, բանավոր գնահատականների և թեմատիկ գրավորների քանակը:

7. Ներկայացնել ատեստավորվող ուսուցիչներին:

Հունվար 3-30

1. Հաստատել12-րդ դասարանների փոփոխված ժամերի թեմատիկ պլանները՝ մինչև 10.01.

2. Հաստատման ներկայացնել 2-րդ կիսամյակի դասացուցակը

5. Ամփոփել բնագիտական առարկաների օլիմպիադաները:

6. Մեթոդմիավորման նիստերին

ա) կատարել կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքների վերլուծություն:

բ) ամփոփել կիսամյակի արդյունքները:

7. Կազմել 2-րդ կիսամյակի բաց դասերի, միջոցառումների, լաբորատոր և գործնական աշխատանքների ժամանակացույց:

8. Կազմել փոխադարձ դասալսումների ժամանակացույց

9. Կազմել առարկայական տասնօրյակների ժամանակացույց

10. Կատարել դասալսումներ:

Փետրվար 1-28

1. Կատարել դասալսումներ, մասնակցել դաստիարակչական ժամերին և ծնողական ժողովներին:

2. Քննարկել օլիմպիադայի արդյունքները և կազմել մարզային փուլի մասնակիցների ցուցակը:

Մարտ 1-31

1. Դասալսումների, բաց դասերի և գործնական աշխատանքների վերլուծություն:

2. Տասնօրյակների քննարկում

3. Մեթոդմիավորման նիստերի մասնակցություն, ներկայացնել առաջադիմությունը և օլիմպիադայի արդյունքները:

Ապրիլ 1-30

1. Դասալսումների վերլուծություն

2. Մեթոդմիավորման նիստերին մասնակցություն, փոխադրական քննությունների նախապատրաստական աշխատանքների քննարկում

3. Կատարողական ստուգում

4. Emis-ում ստուգել սովորողների հաճախումները և գնահատականները:

5. Կազմել փոխադրական քննություններ առարկաների ցանկը՝ ըստ հոսքային դասարանների: 20.04-30.04

6.Կազմել ժամանակացույց և հանձնաժողովի կազմ:

7. Պատրաստել թեստերի նմուշները: 20. 04-30. 04

Մայիս 1-31

1. 10-րդ դասարաններում տալ ստոգիչ գրավոր աշխատաներ:

2. Կազմակերպել և անցկացնել կիսամյակային գրավոր աշխատանքները

3. Նախապատրաստական աշխատանք 10-րդ դասարանիք ավարտական քննություններին

ա) կազմել ժամանակացույց և հանձնաժողովի կազմ

բ)Կազմել խորհրդատվության օրերի ժամանակացույց

4. Կազմակերպել և անցկացնել փոխադրական քննություններ, 25.05-ից հետո:

5. Ամփոփել կիսամյակի և տարեկան արդյունքները:

Կից ներկայացնում եմ փոխադրական քննությունների արդյունքները, կիսամյակային գրավորների արդյունքները, ստուգիչ գրավորների արդյունքները:

## ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Հանձնարարել բոլոր մեթոդմիավորումների նախագահներին մինչև0 5.09.2018թ. հրավիրել մեթոդմիավորումների երկրորդ նիստերը, հաստատել տարեկան իրենց աշխատանքային պլանները, նոր դասագրքերի և ծրագրերի համապատասխան թեմատիկ պլանները, դժվար ըմբռնելի հարցերի շուրջ կազմակերպել կոնսուլտացիաներ, ծանոթանալ ՀՀ ԿԳ նախարարության 2021-22 ուստարվա նորույթներին: | Է. Գալստյան մեթոդ. նախ. | Մինչև 07.09.2018թ. |
| 2. | Հանձնարարել մեթոդմիավորումների նախագահնե-րին.<br>ա/ ստեղծել առաջավոր փորձի ամբիոններ<br>բ/ երիտասարդ և սկսնակ ուսուցիչներին օգնելու և վերապատրաստման,ատեստավորման ուղղությամբ միջոցառումների պլանի համապատասխան ստեղծել համեմատաբար հարուստ փորձ ունեցող և ատեստավորված ուսուցիչների ցուցակ, որոնք ուստարվա ընթացքում համապատասխան օգնություն ցուցաբերեն իրեն կցված սկսնակ ուսուցիչներին: Հստակեցնել յուրա-քանչյուրի աշխատանքը: | Է. Գալստյան մեթոդ. նախ. | մինչև 28 08.2017 |
| 3. | ա/ 2021-22 ուստարվա ուսումնադաստիարակչա-կան աշխատանքների տարեկան պլանի համաձայն կազմակերպել և անցկացնել օրինակելի և փորձի փոխանակման բաց դասեր, յուրաքանչյուր մեթոդ-միավորումում լսել 5-6 ուսուցչի առարկայական-մասնագիտական զեկուցումներ, անցկացնել ռուսաց լեզվի, հայոց լեզվի և գրականության,մաթեմատիկայի, անգլերենի, պատմության, աշխարհագրության, ֆիզիկայի, քիմիայի առարկայական շաբաթներ:<br>բ/ Կիսամյակը մեկ անգամ (կիսամյակի վերջին 3 շաբաթվա ընթացքում) կազմակերպել ստուգողական գրավոր աշխատանքներ ռուսաց լեզվից, մաթեմատիկայից, հայոց լեզվից, ֆիզիկայից, անգլերենից, քիմիայից, կենսաբանությունից, պատմությունից և արդյունքները զեկուցել մանկխորհրդի նիստում:<br>գ/ Յուրաքանչյուր մեթոդմիավորման նիստում առաջավոր փորձերը մասսայականացնել, արձագանքել համապատասխան հոդվածներին:<br>դ/ Կազմակերպել փոխադարձ դասալսումներ, քննարկել նիստերում:<br>ե/ Յուրաքանչյուր կիսամյակի ավարտից 2 շաբաթ առաջ ստուգել ծրագրային նյութերը, չկատարման դեպքում հնարավորություն ստեղծել պակասը լրացնելու: | Է. Գալստյան մեթոդ. նախ.<br><br>Գ. Էմինյան | ուստարվա ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| 4. | Ակտիվ մասնակցություն ցուցաբերել դպրոցական-ների համադպրոցական, համայնքային, հանրա-պետական օլիմպիադաներին և սպորտային միջո-ցառումներին. խթանել, ողջունել դրանք անցկացնել ժամանակին և բովանդակալից։ | Գ. Մամասյան Է. Գալստյան դասղեկներ | Նոյեմբերի կես։ |
| | Ամփոփել դպրոցականների առարկայական օլիմ-պիադաների առաջին փուլի արդյունքները և երկ-րորդ փուլի մասնակիցների ցուցակը ներկայացնել մարզպետարանի կրթության վարչություն | Է.Գալստյան մեթոդ. նախ. | Նոյեմբերի կես։ |
| 5. | Աշակերտներին մասնակից դարձնել քաղաքային միջոցառումներին,էկեղեցական տոներին։ Ուսուցչի տոնին նվիրված կազմակերպել համադպրոցական«« Դասը վարում են աշակերտները» միջոցառումը։ | Է.Գալստյան | Հոկտեմբերի առաջին շաբաթը |
| 6 | Ուշադրության կենտրոնում ունենալ սոցիալապես անապահով սովորողներին,աջակցել անհրաժեշտության դեպքում։ | Է.Գալստյան | |
| 7 | Ամեն ամիս գնահատել ուսման մեջ աչքի ընկնող,ինչ պես նաև իրենց շատ լավ դրսևորած սովորողներին դասամատյաններում եղած գնահատման սանդղակով։ | Է.Գալստյան | |

# Աշխատանք մանկավարժական կադրերի հետ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Հստակ աշխատանք տանել մանկավարժական կադրերի որակավորման բարձրացման ուղղությամբվերապատրաստման, կամավոր ատեստավորման մասնակցություն: | Փոխտնօրեն ու/դ գծով | Տարվա ընթացքում |
| 2 | Սկսնակ ուսուցիչների հետ տանել հետևողական աշխատանք,որ նրանք անընդհատ զբաղվեն ինքնակրթությամբ,գիտակցեն այն հսկայական փոփոխությունները,որոնք կապված են ավագ դպրոցի հետ և որոնց մասնակիցը պետք է լինեն հենց իրենք: | Փոխտնօրեն ու/դ գծով: | Տարվա ընթացքում |
| 3 | Հատկապես կարևորել այն հարցը,թե ուսուցիչները ինչպես են նախապատրաստվում օրվա դասին: | Փոխտնօրեն ու/դ գծով: | Տարվա ընթացքում |
| 4 | Համակարգչային գրագիտության բարձրացում,Նոր հարթակների ուսումնասիրում,նոր ծրագրերի յուրացում: | | |
| 5 | Համակարգչային տեխնիկան դարձնել ամենօրյա օգտագործման անհրաժեշտ պարագա, ապահովել դրանց կիրառումը դասապրոցեսների և առանձ-նացված դասերի ժամանակ: | Փոխտնօրեն ու/դ գծով: | Տարվա ընթացքում |
| 6 | Հոսքային դասարաններում, բոլոր դասարաններում առանձին դասաժամերին (առնվազն ամիսը մեկ անգամ) դասերն անցկացնել համակարգչային դասասենյակում: | | |
| 7 | Ամսվա կտրվածքով ներկայացնել դասալսումների հաշվետվություններն ու եզրակացությունները՝ հստակ ընդգծելով յուրաքանչյուր ուսուցչի թերություններն ու առավելությունները: | | |
| 8 | Օրվա դասալսումները դարձնել հստակ կարգավորված, ըստ յուրաքանչյուր առարկայի առանձնահատկությունների:Օրվա պլանների ստուգում: | | |
| 9 | Շարունակել համագործակցությունը ՎՊՄՀ-ի հետ: | | |

| | | | |
|---|---|---|---|
| 10 | Կազմակերպել փոխադարձ դասալսումներ<br>Հիմք ընել առարկայական դրվածքի ուսումնասիրությանը ըստ ամիսների | Ուսուցիչներ-փոխտնօրեն | Տարվա ընթացքում |
| 11 | Կազմակերպել և անցկացնել ստուգողիչ գրավորներ.կատարել վերլուծություն։ | | |
| 12 | Համագործակցելով Հ.լեզվի և գրականության ուսուցիչների հետ կազմակերպել և անցկացնել<br>ա .ասմունքի մրցույթ ,<br>բ նշել մայրենի լեզվի օրը գիրք նվիրելով,<br>գ.ամեն երկուշաբթի դասերը սկսել ՀՀ օրհներգով։ | մ/մ նախ-փոխտնօրեն | Ամեն ամիս |
| 13 | Խրախուսել դասերը և գործնական աշխատանքները դրսում անցկացնելը։ | | |

Սեպտեմբերի 1-30

1.Տնօրենին հաստատման ներկայացնել դասացուցակը մինչև **1-09**:

2. Տնօրենի հետ ստուգել և հաստատել թեմատիկ պլանները մինչև **5-09**:

3.Emis-ում կատարել ժամաբաշխումը և գրանցել դասացուցակը մինչև**5.09**:

4.Ստուգիչ գրավոր աշխատանքներ 10-րդ դասարաններում հ.լ, մաթեմատիկա,անգլ.,ռ.լ, հ.պատմ.առարկաներից,իսկ մյուս դասարաններում ըստ խորացված առարկաների հ.լ, հ.պ., անգլ.,մաթեմ.մինչև **10.09**:
5.Ուսուցիչների հետ համաձայնեցված կազմել դասերից հետո սովորողների հետ լրացուցիչ անվճար պարապմունքներ անցկացնելու գրաֆիկ մինև**15.09**:

6.Կազմել բաց դասերի, լաբորատոր աշխատանքների, գործնական աշխատանքների, միջոցառումների ժամանակացույց: մինչը **15.09**

7. Կազմել փոխադարձ դասալսումների ժամանակացույց, մինչև **15.09**

8. Դասարաններում ստեղծել աշակերտների գնահատման սանդղակ, **20.09-30.09**:

9. Emis-ում ստուգել աշակերտների հաճախումները և գնահատականները, մինչև **30.09**

10. Քննարկել տարվա լավագույն ուսուցչի մասնակցության հարցը, մինչև **15.09**:

11. Կազմել առարկայական տասնօրյակների գրաֆիկ:մինչև **20.09**

12. Կազմել մ/մ նիստերի օրերի գրաֆիկ:մինչև **20.09**

Կից ներկայացնում եմ ստուգիչ գրավոր աշխատանքների արդյունքները և միջին գնահատականները, աշակերտների հետ ուսուցիչների լրացուցիչ պարապմունքներ անցկացնելու գրաֆիկը, բաց դասերի, միջոցառումների, լաբորատոր աշխատաների, փոխադարձ դասալսումների, առարկայական տասնօրյակների ժամանակացույցը, մ/մ- ան նիստերի օրերի գրաֆիկը:

Յոկտեմբերի 1-31

1. Կազմեկրպված ձևով անցկացնել ուսուցչի տոնին նվիրված ինքնակառավարման օրը՝ ,,Դասը վարում են աշակերտները>> խորագրով: (Ուսուցչի օրը)

2. Կատարել դասալսումներ:

3. Մասնակցել մեթոդմիավորման նիստերին, քննարկել ստուգիչ գրավոր աշխատանքերի արդյունքները, ծանոթանալ կազմակերպվող աշխատանքերին:

4. Ապահովել «Մեղու», «Մեդվեժոնոկ» մրցույթին աշակերտների մասնակցությունը:

5. Աշնանային արձակուրդների ընթացքում ապահովել աշակերտների զբաղվածությունը դպրոցում: